ԱՐՑԱԽԵԱՆ ՕՐԱԳԻՐ

ՕԴԱԿԱՅԱՆԸ ՍԱՆՁԱՐՁԱԿՈՒԹԵԱՆ ՎԱՅՐ

Ստեփանակերտի օդակայանում հայ ուղեւորների նկատմամբ կատարուող անմարդկային վայրագութիւնների մասին մէկ անգամ չէ, որ գրուել ու խօսուել է: Ահա թէ ինչ են պատմում ականատեսները, որոնց անունները նպատակայարմար գտնուեց չհրապարակել:

Ռ.Ա.- «Ամուսինս գործուղման պէտք է մեկնէր: Մօտեցանք ուղեփակոցին, այնտեղ մերելային լռութիւն էր տիրում: Վախից սկսուել էինք: ՕՄՕՆականները մօտենալով մի յղի կնոջ, ձեռքը մեկնելով փորին հարցրեցին.«Սա ֆիդայի՞ է, թէ՞ ձմերուկ»: Չենց այդ պահին մէկը աւտոմատով մօտեցաւ, թէ ինչ հանոյքով բոլորիդ կը սպանէի: Առաջ ընկիր, հրամայեց մէկը ամուսնուս...:

Ամուսինս զանգեց Երեւանից: 45 տարեկան տղամարդը լաց էր լինում: Ամբողջ 45 րոպէ բռիչքի ընթացքում լաց էր եղել բերանին ստացած ուժեղ հարուածից: Ձեռքից խլել էին փողը, մերկացրել էին, դաժանօրէն ծեծել: Դանակը սեղմել էին կոկորդին, ասելով, որ կը սպանեն եւ նոյնիսկ կամրջակի վրայ հասցրել էին վերջին հարուածը»:

Ա.Ա.- «Իջանք Ստեփանակերտի օդակայանում: Երկու ուսանող էինք: Ամեն քայլափոխի կանգնեցնում եւ ստուգում էին փաստաթղթերը: Մենք կուլ էինք տալիս նրանց ծաղրալի խօսքերը, մտածելով, որ դրանով ամեն ինչ կը վերջանայ: Մեր անձնագրերում երեւանեան ժամանակաւոր գրանցում կար: ՕՄՕՆականները հարց ու փորձ արեցին, յետոյ սպառնացին, որ կը կալանեն կամ յետ կ'ուղարկեն Երեւան: Մեզ պատահած առաջին ՕՄՕՆականը 25 ռուբլի փող վերցրեց ու բաց թողեց: Ուրախացանք, կարծելով թէ ամեն ինչ վերջացած է, սակայն այդպիսի մի քանի արգելափակոց յաղթահարեցինք... Նոյն հարցուփորձը, սպառնալիքները, ծեծուելու սարսափը, զումար «մուծել»ը... Մի կերպ հասանք վերջին արգելափակոցին: Այստեղ պահանջեցին աւելի մեծ զումար՝ 100 ռուբլի: Այս ամենը կատարւում էր այնպիսի լկտիութեամբ, որ նկարագրելը շատ դժուար է»:

ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԽՐՈՆԻԿԱ

Մարտակերտ

Օգոստոսի մէկին պարզաբանուել է, որ նախորդ գիշեր զինուորական շարասեան վրայ անյայտ անձանց կողմից Դրմբոն գիւղի մօտակայքում կատարուած յարձակման հետեւանքով 5 մարդ վիրաւորուել է, երկու զրահամեքենայ դուրս են եկել շարքից:

Վիրաւորներից 4ը զինծառայողներ են, 5րդը լրագրող, որի ինքնութիւնը պարզուած չէ:

Տարբեր աղբիւրներ հաղորդում են, որ այդ գիշեր եւ յաջորդ առաւօտեան նկատուել է զինուորական շարասիւների տեղաշարժ Մարտակերտի շրջանի ամբողջ տարածքում:

Ինչպէս վկայում են Կիչան գիւղի բնակիչները, տասնեակ զրահամեքենաներից կազմուած մի շարասիւն գիշերը մնալով գիւղի մօտակայքում, առաւօտեան ուղղուել է դէպի Մարտակերտ: Մէկ այլ շարասիւն, անցնելով Զլդրան, Դրմբոն գիւղերը, ուղղուել է դէպի ադրբեջանաբնակ Ումուղլու գիւղը: Միւս շարասիւների շարժման ուղղութիւնը յայտնի չէ:

Պարզուել է, որ շարասիւներից մէկը կազմուած է Կիեւեան զնդի զինծառայողներից:

Վերջին օրերին նկատւում է ՕՄՕՆականների աննախընթաց կուտակում Մարտակերտի շրջանում եւ շրջանին յարակից ադրբեջանական տարածքում:

Հադրութ

31 Յուլիսի. երկու ազերի սպանուել եւ հինգը պատանդ են վերցուել անցած գիշեր Հադրութի շրջանի Ծամձոր գիւղում: Այդ միջադէպի մասին ոչ մի մանրամասնութիւն դեռեւս պարզուած չէ: Յայտնի է միայն, որ լուսադէմին գիւղի վրայ կատարուել է յարձակում, որի ընթացքում փոխհրաձգութեան ժամանակ էլ սպանուել են ազերիները: Յիշեցնենք, որ Ծամձոր գիւղի հայ բնակչութիւնը անցած Մայիսի ըսկզբներին բռնի կերպով տեղահանուել է, գիւղը ենթարկուել թալանի ու կողոպուտի: Անվտանգութեան երաշխիքի բացակայութեան պատճառով հայ բնակչութիւնը դեռեւս չի վերադարձել հայրենի գիւղ: Ամայացած գիւղը գտնւում է ազերի թալանչիների տնօրինութեան տակ:

Օգոստոսի 1ի երեկոյեան տեղի ունեցաւ զինուած յարձակում Հադրութի շրջանի Սարիշէն գիւղում տեղակայուած ՕՄՕՆականների պահակախմբի վրայ:

Ջեբրայիլի շրջանի միլիցիայի աշխատակիցներից բաղկացած պահակախումբը ենթարկուեց երկարատեւ զնդակոծութեան ինքնաձիգերից ու զնդացիրներից:

Հայկական աղբիւրները պնդում են, որ ՕՄՕՆականներից կան զոհեր կամ առնուազն մի քանի վիրաւորներ: Ջեբրայիլի շրջանի ներքին գործերի բաժինը պնդում է, որ ՕՄՕՆականները պատասխան կրակ չեն բացել եւ ժխտում է վիրաւորների առկայութեան փաստը:

Նշենք, որ Սարիշէն գիւղի բնակիչները տեղահանուել էին իրենց տներից եւ ապաստան գտել Հադրութում: Զնայած որ գիւղում վաղուց կար զինուորական պահակակէտ, բնակիչները վախենում են վերադառնալ հարազատ օջախները, քանզի մօտակայ ռադիո-հեռուստաարձակիչ կայանում դեռեւս տեղակայուած է ՕՄՕՆականների պահակախումբը:

Մի քանի օր առաջ հայերը զինուորականների միջոցով պահանջել են ՕՄՕՆականներից հեռանալ կայանից եւ ստացել են բացասական պատասխան. «Մենք միայն կոռուով ենք բռնելու մեր դիրքերը», հաղորդել է պահակախմբի աւագը: Դեռեւս յայտնի չէ, յարձակումից յետոյ ՕՄՕՆականները հեռացե՞լ են հեռուստակայանից, թէ ոչ:

Օգոստոսի 2ի երեկոյեան Հադրութի շրջանում հայերը զնդակոծել են Դոլանլար գիւղը:

Մարտունի

2 Օգոստոսի. Այսօր կէսօրին Մարտունի ժամանեց Ադրբեջանի միացեալ օպերատիւ ինքնիշ խմբի ղեկավար Հուսէյնովը, որին 2 աւտոբուսներով ուղեկցում էին ՕՄՕՆականները ու զինուորականները: Զինուորական պարետատան շէնքում նա հանդիպեց շրջանի դատախազ Լիպարիտ Ղահրամանեանի եւ զինուորական պարետ փոխգնդապետ Կանոնովի հետ: Հանդիպման ընթացքում Հուսէյնովը խնդրեց շրջանի դատախազի բոյլտուութիւնը եւ շրջանի զինուորական պարետի օգնութիւնը ադրբեջանաբնակ Ղարադաղլու գիւղում Յունիս պմսին կատարուած սպանութիւնների մէջ կասկածուող հայերի ձերբակալման հարցում:

Զինուորական պարետը ընդհանրապէս հրաժարուել է միջամտել այդ գործին, իսկ շրջանային դատախազը իր համաձայնութիւնն է տուել միայն այն դէպքում, երբ ձերբակալուած հայերը պահուեն շրջանի ՆԳ բաժնում եւ 3 օրուայ ընթացքում մեղադրանքները չապացուցուելու դէպքում ազատ արձակուեն:

Ստանալով բացասական պատասխան, Հուսէյնովը հեռացաւ Մարտունուց:

Ասկերանի շրջան

Օգոստոսի 4ի երեկոյեան հրազէնից վիրաւորուել է Ասկերանի շրջանի ներքին գործերի բաժնի ինքնիշ Թաքուլ Բաղիրեանը: Նա գտնուել է «Ժիգուլի» աւտոմեքենայում, որի վարորդը չի ենթարկուել Ստեփանակերտի մուտքի մօտ ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զօրքերի զինծառայողների պահակախմբի կանգ առնելու պահանջին, «Ինտերֆաքս»ի թղթակցին հաղորդել են ԼՂԻՄի ՆԳ վարչութիւնում:

Քաղաքային հիւանդանոցում կատարուած փորձաքննութեամբ հաստատուել է, որ կրակող երեք զինուորները հարբած են եղել:

Օգոստոսի 3ին Շուշի քաղաքի կողմից զնդակոծուել է Ասկերանի շրջանի Շոշ գիւղը: Նոյն ժամանակամիջոցում Ասկերանի շրջանի Մրխիթարաշէն հայկական գիւղի կողմից ինքնաձիգ զէնքով զնդակոծուել է Շուշի քաղաքը: Տուժածների մասին տուեալներ չկան:

Շահումեան

Օգոստոսի 3ին շրջանի Կարաչինար գիւղի մօտ անյայտ անձինք պատանդ են վերցրել 4 ադրբեջանցու, այդ թում մէկ երեխայ:

ՊԱՐՏԻԶԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ Է ՍԿՍՈՒԵԼ

Յուլիսի 29ին հայկական ինքնապաշտպանական ջոկատները յարձակուել են Շահումեանի շրջանի Էրքեջ գիւղի վրայ, որտեղ ներկայումս տեղաբաշխուած են Ադրբեջանի ՕՄՕՆի ստորաբաժանումները: ընպանուել են 7, վիրաւորուել են մէկ տասնեակից աւելի ՕՄՕՆականներ:

ԼՂԻՄում եւ Շահումեանի շրջանում բռուցիկներ են տարածւում, որոնք ստորագրուած են «Գետաշէնի վրիժառուներ»:

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՆՈՒԱՆԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Սալատրնքենդ են կոչել ազերիները Շուշիի շրջանի Բերդաձորի ենթաշրջանի Եղծահող գիւղը՝ ի յիշատակ այս տարուայ Յունուարի ըսկզբներին Լաչին-Շուշի ճանապարհին անյայտ անձանց յարձակման հետեւանքով զոհուած լրագրող Սալատրն Ասկերովայի, տեղեկացնում է «Բակինսկի ռաբոչի» թերթի Յուլիսի 20ի համարը:

Թերթում տպագրուած է մի լուսանկար Եղծահող գիւղի համայնապատկերով եւ ադրբեջանցի գրող Նաբի Խազրու «Սալատրն» պոեմից հատուածներ:

Լուսանկարի տակ գրուած է. «Սարերի լանջերում փռուած այս գիւղը Սալատրնքենդն է: Մեր ցաւերի, մեր հպարտութեան՝ Սալատրն Ասկերովայի անունը այս տներում է, այս փողոցներում, հենց Ղարաբաղում օդի մէջ...»:

Թէ ինչ բախտի են արժանացել Բերդաձորի միւս հայկական գիւղերը, յայտնի չէ:

ՄՈՒԹԱԼԻԲՈՎԸ ԽՆԴՐՈՒՄ ԵՒ ՊԱՀԱՆՋՈՒՄ Է

Օգոստոսի 1ին նորութիւնների հեռուստատեսային ծառայութիւնը հաղորդեց, որ Ադրբեջանի նախագահ Ա.Մութալիբովը դիմել է արտասահմանում բնակուող իր հայրենակիցներին, խնդրելով նրանց «ստանձնել հոգեւոր կամրջի դերը հայրենիքի, հարազատ ժողովրդի ու համաշխարհային հասարակութեան միջեւ՝ Ադրբեջանի մասին լրատուութեան տարածման գործում»: